Հաստատում եմ՝ _____

Տնօրեն՝ _____ Գ.Սեխպոսյան
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու համար 26 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն

2022-2023 ուստարվա տնօրենի աշխատանքային պլան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Դպրոցում կրթության գործընթացը կազմակերպել ՀՀ Կրթության մասին օրենքին համապատասխան:
2. Կրթական բնագավառում պետական քաղաքականության հիմքն համարել ազգային դպրոցը, որի գլխավոր նպատակը մարդկային մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:
3. Կրթությունը նպատակաուղղել հայ ժողովրդի և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:
4. Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներ համարել

   ա)Մարդասիրության բնույթի, համամարդկային արժեքների, սովորողի կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացումը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանման աշխարհայացքի դաստիարակությունը:

   բ) Կրթության մատչելիության, շարունակականության, հաջորդականության համապատասխանությունը սովորողների պատրաստականության աստիճանին համապատասխանեցնելը:
5. Կրթության բովանդակությունը նպատակաուղղել երիտասարդ սերնդի դաստիարակության՝ պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց ինքնորոշմանը և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:
6. Պետական կրթական չափորոշիչ սահմանել կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:
7. Առաջնորդվել հանրակրթական ծրագրով (հիմնական ընդհանուր, միջնակարգ ընդհանուր):
8. Կրթության բովանդակությունը պետք է ապահովի.

   1)Սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը՝ գիտելիքների, կրթական ծրագրերի բարեփոխումների ժամանակակից մակարդակին համապատասխան:

   2)Սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը:

   3)Սովորողների կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:

ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սովորողների կողմից բնության, հասարակության, ժամանակակից տեխնոլոգիաների, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգումը, կրթօջախի սովորողների ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:
2. Համամարդկային և ազգային արժեքների հաղորդակից, ազգային մշակույթին ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը:
3. Սովորողների հետաքրքրությունների խթանումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:
4. Ավագ դպրոցում /X-XII/ ուսումը՝ հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը նպատակաուղղելը:
5. Սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, մասնագիտական կողմնորոշմանը:
6. Մանկավարժների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացների ապահովումը, նրանց նորարարական գործունեության մասսայականացումը:
7. Սովորողների արժեքային համակարգի զարգացման ուղղությամբ նոր ու ստեղծագործ միջոցառումների կազմակերպումը:
8. Դպրոցի ներքին գնահատման ուղղությամբ կատարված աշխատանքների վերլուծությունը, ուսհաստատության ուժեղ կողմերի խթանումն ու թույլ կողմերի վերացման նպատակով ուղիներ մշակելն ու նոր մեթոդների կիրառումը:

2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- 2021 - 2022 ուստարում կրթօջախում կոմպլեկտավորվել է 10 դասարան 89 սովորող:

- Ուստարվա ընթացքում դպրոց է ընդունվել 10 աշակերտ, տեղափոխվել՝ 3-ը, տարեվերջում 93 սովորող:

Հաջորդ դասարան փոխադրվել է 51 սովորող: Ավագ դպրոցն ավարտել է 42 աշակերտ, 2022թ. հունիս ամսից դպրոց ընդունվել են 45 սովորող:

- 2021-2022 ուստարվա 26 սովորողներ ընդունվել են ԲՈՒՀ, 1 մեդալակիր սովորող, 6 սովորողներ Կարիտասի օգնությամբ ձեռք են բերել մասնագիտություն:

- Դպրոցն անցել է կառավարման նոր ձևի:

- Դպրոցում գործում է Լեզվի ռեսուրս կենտրոն, Արմաթ ինժեներական լաբորատորիա խմբակ, Արմաթն օդում խմբակ:

- 2020-2021 ուստարում դպրոցը հիմնովին վերանորոգվել է:

-Ուստարում կրթօջախի տնօրինության և մանկավարժական հանրույթի գործունեությունը նպատակաուղղվել է ուսումնադաստիարակչական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու, ուսման որակը բարձրացնելու, լավագույն փորձը տարածելու, ինչպես նաև ուսումնական աշխատանքներին նպաստող միջոցառումների կազմակերպման՝ պետական չափորոշիչների պահանջները ապահովելու համար:

Կրթօջախի բոլոր ուսուցիչներն աշխատել են թեմատիկ պլաններով և օրինակելի օրապլաններով: Լավագույն ուսուցիչների փորձը ուսանելի է դարձել շատերի համար: Ուսուցչի աշխատանքի՝ ուսումնասիրման մեթոդական և առարկայական օգնություն կազմակերպելու ուղղությամբ, օգտակար է եղել, ինչպես տնօրինության, մեթոդմիավորումների նախագահների, այնպես էլ փոխադարձ դասալսումները: Արդյունքում՝ կատարած դասալսումների խորը վերլուծություններն ու ուսուցիչներին ներկայացված պահանջները, դրանց կատարումը բերել են կրթական գործի արդյունավետության: Ուստարվա ընթացքում սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական ու միասնական քննությունները ցույց տվեցին, որ կրթօջախը հասել է զգալի հաջողությունների՝ գրանցելով 43 շրջանավարտներից 1 մեդալակիր սովորողներ, իսկ 26 սովորողներ ընդունվել են Հանրապետության տարբեր ԲՈՒՀ-եր:

Հատկանշական է դպրոցը լաբորատոր գույքով զինելու փաստը: ԿԳ նախարարության միջոցով հարստացել են ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն առարկաներին անհրաժեշտ սարքավորումներն ու նյութերը: Մասնակցել հաստատությունում անցկացվող շինարարական աշխատանքներին՝ դպրոցն հարմարավետ դարձնելու նպատակով

Հ/հ	Աշխատանքի բովանդակություն	Ժամկետ	Պատասխանատու	Նշումներ կատարվածի մասին
	ԲԱԺԻՆ 1 **ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**			
1.	Դասաբաշխում՝ հնարավորինս պահպանելով առավելագույն ծանրաբեռնվածության չափը:	20-25 օգոստոս	առ. ենթ. մ.	
2.	X դասարանցիների ընդունելություն՝ ավագ դպրոցում:	5 սեպտեմբեր		
3	Ավագ դպրոցի հոսքային դասարանների կոմպլեկտավորում, դպրոցի ներքին կարգապահական կանոնների, ռեժիմի սովորողներին ծանոթացում:	15-20 սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	
4.	Դասարանների կոմպլեկտավորում:	15 սեպտեմբեր	Մ. Մանուկյան	
5.	Կազմել դասացուցակ՝ հաշվի առնելով ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը:	15-19 սեպտեմբեր	Մ. Մանուկյան	
6.	Հաստատում և վերստուգում ուսուցիչների և սովորողների անձնական գործերը էլեկտրոնային տարբերակով:	20-25 սեպտեմբեր	Հ. Գրիգորյան	
7.	Դպրոցական բաղադրիչ ժամերի բաշխում և հաստատում:	14 սեպտեմբեր	առ. ենթ.մ.	
8.	Ուսումնական սարքավորումների, քարտեզների, գործիքների, մարզական գույքի, գեղարվեստական գրականության, լաբորատոր սարքավորումների ձեռք բերում: Ուսումնանյութական բազայի հարստացում:	սեպտեմբեր ամսում	Հ. Գրիգորյան	
9.	Անգլերեն, ֆրանսերեն և ուսաց լեզու առարկաների դրվածքի ուսումնասիրություն, դասավանդող ուսուցիչների վերապատրաստում:	IX ամիս-ի ընթացքում	Գ.Սեխպոսյան	
10.	Հետևել սովորողների և մանկավարժների հաճախումներին, վերացնել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները:	մշտական	Հ. Գրիգորյան	
11.	Միջոցառումների պլան՝ սովորողների գիտակցական կարգապահության բարձրացման նպատակով:	մշտական	Գ.Սեխպոսյան Հ. Գրիգորյան	
12	Վերահսկել առարկայական ենթամիավորումների գործունեությունը՝ կարևորելով պետական և առարկայական չափորոշիչների պահանջների կատարումը:		Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	
13	Անհատական աշխատանք չառաջադիմող սովորողների հետ՝ հաճախակի դասալսումներով, բնակարանների այցելությամբ, նրանց ռեժիմին ու կենցաղին ծանոթանալով:	10 հոկտեմբեր տարեվերջ	դասղեկներ	
14.	Սովորողների հաճախումների հաշվառում ամեն օր: Վերացնել անհարգելի բացակայություններն ու ուշացումները, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	մշտական	Մ.Մանուկյան Հ. Գրիգորյան	

15.	Դժվար, հաճախակի անհարգելի բացակայող սովորողների հարցը լսել ծնողական եւ աշակերտական խորհուրդներում, մանկավարժական աշխատանք կազմակերպել նրանց ծնողների հետ:	ուստարի	փոխտնօրեն ծնողական խորհուրդ	
16.	Միակողմանի, երկկողմանի ծնողազուրկ և սոցիալապես անապահով սովորողների հաշվառում, հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով և գրենական պիտույքներով:	սեպտեմբեր	Հ. Գրիգորյան ծնողական խորհուրդ	
17	Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին:	ուստարվա ընթացքում	տնօրեն	
18.	Խորացնել եւ ընդլայնել համագործակցային կապը ինչպես ՀՀ դպրոցների, այնպես էլ արտերկրի առաջավոր փորձ ունեցող դպրոցների սովորողների եւ մանկավարժների հետ:	ուստարի	մ/մ նախագահներ	
19.	Ուսումնական գործընթացը կազմակերպել հինգօրյա միահերթ աշխատանքային ռեժիմով, ուսումնական պարապմունքները սկսել 8 ^{30}-ից մինչև 14 ^{20}-ը:	ուստարի	Գ.Սեխպոսյան	

1.	**ԲԱԺԻՆ 2** **ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ** Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:	սեպտեմբեր օգոստոս	Մ.Մանուկյան գրադարանավար	
2.	Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ հանրակրթական հաստատությունում ուսումնա-դաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հանձնարարել՝ ա) առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուս. տարվա առարկայական մասնախմբի աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման էլեկտրոնային տարբերակով:	սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	
	բ) ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով և նախասիրականով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,	սեպտեմբեր	Մ.Մանուկյան	
	գ) ստուգել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն (գրավոր) տնօրենությանը:	1-15 սեպտեմբեր	Մ.Մանուկյան	
3.	Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ. անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր:	ամիսը մեկ անգամ	Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	
4.	Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 13-16 ժամ/ տնօրեն՝4-5, փոխտնօրեն՝ 7-8, առարկայական մասնախմբի նախագահ՝ 2-3/: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություն-հանձնարարություններ: Դիտողություններն ու հանձնարարությունները գրանցել ուսուցչի աշխատանքային գործունեությունը բնութագրելու համար հատկացված «Դիտողությունների և առաջարկությունների գրանցման» մատյանում:	ուս տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան փոխտնօրեններ մասնախմբերի նախագահներ	
5.	Ստեղծել «Հետազոտական դպրոց, մանկավարժական լաբորատորիա» ներդպրոցական միավորում՝ տնօրենի ղեկավարությամբ: Միավորման նիստերը գումարել ոչ ուշ, քան 2 ամիսը մեկ անգամ: Միավորումում ընդգրկել 5-9 հմուտ, իրենց աշխատանքին ստեղծագործաբար մոտեցող, հեղինակություն ունեցող ուսուցիչներ:	սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան միավորման անդամներ	

6.	Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչ-ներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկա-վարժական օգնություն:	ուս տարվա ընթացքում	փոխտնօրեններ առարկայական մասնախմբերի նախագահներ	
7.	Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման տասը միավորանի սանդղակի մեթոդա-կան ցուցումների կիրառումը: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր /հարցաշա-րերի բանկ/ և հաճախ 10-12-րդ դասարաններում սովո-րողների գիտելիքները ստուգել նաև համակարգիչ-ների միջոցով: Կիսամյակի ընթացքում ավագ դպրոցում առնվազն երկու անգամ բոլոր առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ՝ տնօրինության ներկայացուցչի կամ առարկայական մասնախմբի նախագահի մասնակցությամբ:	տարվա ընթացքում	տնօրինություն առ. ենթ.մ ուսուցիչներ	
8.	Հարստացնել դպրոցի լաբորատորիաները: Հետևել, որպեսզի դասը հագեցված լինի զանազան ուսումնա-դիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումնե-րով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը:	ուս տարվա ընթացքում	տնօրինություն	
9	Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտա-գործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն սովորողների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:	ուս տարվա ընթացքում	Մ.Մանուկյան Հ.Գրիգորյան ուսուցիչներ	
10	Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսու-թյուններ, սեմինարներ: Այդ նպատակով հրավիրել բարձրորակ մասնագետներ այլ հաստատություններից:	ուս տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան	
11.	Պահանջել, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուսում-նական տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական - մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով: Այն քննարկել առարկայական մասնախմբում:	ուս տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան մասնախմբի նախագահ	
12.	Ուսումնասիրել փորձառու ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում: Այն իրականացնել «Հե-տազոտական դպրոց, մանկավարժական լաբորա-տորիա» ներդպրոցական միավորման անդամների և առարկայական միավորումների նախագահների միջոցով:	մշտապես	Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	
13.	Ստեղծել առաջավոր փորձի դպրոցներ, փնջային մեթոդ միավորումներ, ընդգրկել ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ մարզի դպրցների մանկա-վարժներին: Այս գործում ակնկալել մարզային կրթության վարչության աշխատակիցների օժանդակությունը և մասնակցությունը:	ուս տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան	
14	Մանկավարժական խորհրդում կարդալ տարբեր թեմաներով զեկուցումներ:	ուս տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան	
15	Կազմակերպել խորհրդատվական պարապմունքներ սովորողներին քննությունների նախապատրաստելու համար:	մայիս	Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	

16	Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը քննությունները սկսվելուց առնվազն 10 օր առաջ:	մայիս	Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	
17	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	ընթացքում	տնօրինություն	
18	Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերի:	ուս տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան	
19	Յուրաքանչյուր առարկայական մասնախմբից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը. արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ առարկայական մասնախմբում՝ տալով համապատասխան գնահատական: Հասնել այն բանին, որ մանկավարժական հանրույթն իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ընդհանրական պահանջները:	ուս տարվա ընթացքում	Մ.Մանուկյան Հ.Գրիգորյան	
20	Կարևորել ուսուցիչների ինքնավերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքները, ամեն ամիս առարկայական մ/մ նիստերում լսել ու քննարկել նրանց մասնագիտական ձեռքբերումներն ու աշխատանքային նորարարությունները:	ամիսը մեկ անգամ	Մ.Մանուկյան Հ.Գրիգորյան մ/մ նախագահներ	

1.	**ԲԱԺԻՆ 3** **ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ** Ապահովել ուսուցիչների կողմից կրթական ծրագրերի բովանդակային զարգացումը, սովորողներին առաջադրվող ուսումնական նյութի ծավալը, առ. ենթ.մ.-ին ներկայացվող որակական առջադիմության պահանջները՝ համաձայն առարկայական չափորոշիչների:	ուստարի	ուսմասվար առ.ենթ.մ. նախագահներ	
2.	Բոլոր ծրագրերը նպատակաուղղել սովորողների համակողմանի զարգացմանը, աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրությունների և ընդունակությունների բացահայտմանը:	ուստարի	մանկավարժ. խորհուրդ	
3.	Ուսուցիչներին ապահովել թեմատիկ նոր պլանավորումներով, մեթոդական ուղեցույցներով, նոր դասի կառուցվածքային պլաններով:	սեպտեմբեր ամսում	առ. ենթ.մ. նախագահներ Գ.Սեխպոսյան	
4.	Հաճախակի ստուգել էլեկտրոնային դասամատյանները, սովորողների գնահատման ձևերը՝ պահպանելով գնահատման չափորոշչային պահանջները:	մշտական	Գ.Սեխպոսյան	
5.	Հաճախակի ստուգել սկսնակ, սակավափորձ ուսուցիչների թեմատիկ պլանները, օրապլանները, դասավանդման նոր մեթոդները, ձևերն ու հնարները:	մշտական	Գ.Սեխպոսյան	
6.	Ամեն ամիս ստուգել սովորողների օրագրերը և դասամատյաններում ուսմասվարի կողմից արված դիտողություններն ու ստուգումների առկայությունը:	մշտական	Գ.Սեխպոսյան	
7.	Կազմակերպել այլընտրանքային դասաժամեր բնագիտական և հումանիտար առարկաներից և լավագույն դասաժամերը ցուցադրել:	I կիսամյակ	Գ.Սեխպոսյան առ. ենթ.մ. նախագահ	
8.	Տալ գրավոր աշխատանքներ մաթեմատիկայից, հայոց լեզվից, օտար լեզուներից, հայոց պատմությունից և բնագիտական առարկաներից:	1-10 հոկտեմբեր	Գ.Սեխպոսյան	
9.	Կազմակերպել թեմատիկ դասալսումներ հայոց լեզու և գրականություն, օտար լեզուներ դասավանդող ուսուցիչների մոտ՝ դասավանդման վիճակը, ձևերն ու մեթոդները պարզելու, գործնական աշխատանքների և աշակերտակենտրոն դասաժամերի կազմակերպումը, նպատակային և արդյունավետ դարձնելու համար:	I կիսամյակ	առ. ենթ.մ.	
10	Ստուգել սովորողների գրավոր աշխատանքների տետրերը (X դասարաններում):	I կիսամյակ	առ. ենթ.մ.	
11	Գործնական աշխատանքների կազմակերպման արդյունավետության նպատակով պլանավորել ցուցադրական դասեր բնագիտական առարկաներից:	II կիսամյակ	տնօրինություն	
12	Երիտասարդ ուսուցիչներին օգնելու նպատակով հաճախակի դարձնել փոխադարձ դասալսումները, կազմակերպել խորհրդատվություն, ու քննարկումներ, ցուցադրական բաց դասեր:	մշտական	ուսմասվար առ. ենթ.մ.	

13	Կազմակերպել միջդասարանային առարկայական օլիմպիադաներ բոլոր առարկաներից, մասնակցել դպրոցական և համաքաղաքային օլիմպիադաներին:	տարվա ընթացքում փետրվար	Մ. Մանուկյան դասղեկներ	
14	Մատենավարությունը ստուգել ամեն օր, ուշադիր լինել գիտելիքների գնահատմանը, ուսուցանվող նյութերի գրանցմանը, պահպանել գիտելիքների գնահատման չափանիշները:	մշտական	Մ. Մանուկյան Հ. Գրիգորյան	
15	Ապահովել ուսուցիչների մասնակցությունը դպրոցում և քաղաքում գործող սեմինար խորհրդատվական պարապմունքներին:	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան	
16	Կազմակերպել սեմինար պարապմունքներ (տարբեր առարկաներից), ծրագրերում տեղ գտած փոփոխությունները, նորությունները, տրամաբանական խնդիրներն ու վարժությունները, տեսական նյութերը, բանաձևերը ծանոթացնել առ. ենթ.մ.-ի անդամներին:	սեպտեմբեր հոկտեմբեր ամիսների ընթացքում	առ. ենթ.մ. Մ.Մանուկյան Հ. Գրիգորյան	
17	Նոր ստացված մեթոդամանկավարժական գրականության և դասագրքերի ծանոթացում և քննարկում:	տարվա ընթացքում	առ. ենթ.մ.	
18	Համակարգչային տեխնոլոգիայի ներկրում տարբեր առարկաների դասաժամերի կառուցվածքում՝ ինֆորմացիայի ձեռք բերման նպատակով:Զարգացնել էլեկտրոնային գրադարանի գործունեություն:	տարվա ընթացքում	Ս. Բեգջանյան մանկ. հանրույթ	
19	Դասաժամերի պլանավորումն ու ծրագրավորումը կատարել կրթակարգի պահանջների ու չափորոշիչների համապատասխան:	ուստարի	Մ.Մանուկյան Հ. Գրիգորյան	
20	Պահպանել գնահատման ձևերի պահանջները, միավորային գնահատման սկզբունքների պահպանման համար կազմակերպել սեմինար պարապմունքներ բոլոր ուսուցիչների համար:	5 –10 մայիս	Գ.Սեխպոսյան	
21	Ապահովել ուսուցիչների վերապատրաստումը և ատեստավորման ներկայացված ուսուցիչների ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ու մեթոդա-մանկավարժական օգնություն:	25 մայիս	Հ. Գրիգորյան	
22	Ավագ դպրոցում անցկացնել գիտագործնական կոնֆերանսներ սովորողների և ուսուցիչների մասնակցությամբ:	մշտապես	ուսումնական մաս	
23	Քննական հրահանգը մասսայականացնել ուսուցիչների, սովորողների և ծնողների շրջանում:	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան ուսումնական մաս	
24	Կազմել ամառային առաջադրանքների աշխատակարգ:	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան ուսումնական մաս	
25	Ուսուցիչների և սովորողների կողմից ստեղծված բանավեճի ակումբները դարձնել ավելի հմուտ և կատարյալ:	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան ուսումնական մաս	
26	Ստեղծել պայմաններ հաստատությունում տարակարգ ունեցող մանկավարժների ավելացմանը:	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան ուսումնական մաս	
27	Լսելի դարձնել սովորողների խնդիրներն ու պահանջները, սովորողներին մասնակից դարձնել որոշումների ընդունմանը:	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան ուսումնական մաս	
28	Ավելի հաճախակի դարձնել համագործակցությունը Գյումրու հիմնական դպրոցների հետ, որի արդյունքում դպրոցի հնարավորությունները և մանկավարժների	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան ուսումնական մաս	

	մասնագիտական հմտություններն ավելի տեսանելի կլինեն, որն էլ կնպաստի հաստատությունում աշակերտների թվի աճին:			
29	Սովորողների մասնագիտական կողմնորոշումն խթանելու նպատակով համագործակցել տարբեր արտադրական ձեռնարկությունների հետ: Սովորողների հաճախ այցելությունը տարբեր զորամասեր կխթանի արժեհամակարգի ճիշտ ձևավորմանը:	տարվա ընթացքում	Գ.Մեխպոսյան ուսումնական մաս	
30	Հաստատությունը համագործակցելով Լեռնագնացության ակումբ ՀԿ-ի հետ, որը միակն է հանրապետությունում նպաստում է սովորողների մոտ կամային հատկանիշների, ինքնավստահության, նպատակասլացության դրսևորմանը:	տարվա ընթացքում	Գ.Մեխպոսյան ուսումնական մաս	

	ԲԱԺԻՆ 4 **ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՆԹԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**			
1.	Առարկայական ենթամիավորումների աշխատանքներում ծրագրավորել ուսուցման պրոցեսի կատարելագործման, ուսուցչի մեթոդական վարպետության, մասնագիտական կարողություններին, ուսման որակի բարձրացմանը նպաստող հարցեր:	ուստարի	առ. ենթ.մ.	
2.	Կատարել ծրագրային նյութերի, օրվա պլանների, ուսուցչի օրագրերի սիստեմատիկ ստուգումներ: Արդյունքները ամփոփել առ. ենթ.մ.-ի նիստերում:	ուստարի	առ. ենթ.մ.	
3.	Ընդհանուր գիտելիքների ստուգում X դասարաններում: Ստուգման արդյունքները ամփոփել առ. ենթ.մ.-ի նիստերում:	դեկտեմբեր մարտ	Գ.Մեխպոսյան	
4.	Մեծ տեղ տալ գրավոր և բանավոր խոսքի զարգացումը խթանող աշխատանքների կազմակերպմանը, բարձրացնել գրագիտության որակը՝ չբացառելով ոչ մի ձև ու մեթոդ՝ սովորողների արժեքային համակարգը զարգացնելու համար:	տարվա ընթացքում	հայոց լեզվի և գրականության առ. ենթ.մ.	
5.	Հետևողական լինել տնային աշխատանքներին և դրանց կատարմանը՝ չծանրաբեռնելով երեխաներին: Հիմնական գործը կատարել դպրոցում:	մշտական	ուսուցիչներ	
6.	Ճիշտ գնահատել սովորողներին, հիմնավորել յուրաքանչյուր գնահատական՝ պահպանելով «Գնահատականը նաև դաստիարակության միջոց» սկզբունքը:	մշտական	ուսուցիչներ	
7.	Կարևորել մանկավարժական ընթերցումների ու մեթոդական զեկուցումների դերը և հաճախակի դարձնել դրանց կազմակերպումը տարբեր թեմաներով:	ուստարի	առ. ենթ.մ.	
8.	Փոխադարձ դասալսումներ	ուստարի	ուսուցիչներ	
9.	Լավագույն ուսուցիչներին ներկայացնել խրախուսանքի, բացահայտել «Տարվա լավագույն ուսուցիչներին», խրախուսել, պարգևատրել:	1-15 ապրիլ	Գ.Մեխպոսյան	
10.	Մեծ տեղ տալ «Հատուկ դասերի» կազմակերպման գործին:	ամիսը մեկ անգամ	Գ.Մեխպոսյան	
11.	Ակտիվ և գործնական աշխատանք ծավալել օժտված և խելացի սովորողների շրջանում, ապահովել նրանց մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին:	տարվա ընթացքում	մանկ.հանրույթ կազմ. հանձնաժող.	

	ԲԱԺԻՆ 5 **ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**			
1.	Հաստատել կրթօջախի ուսումնական տարվա դաստիարակչական աշխատանքների ծրագրերը էլեկտրոնային եղանակով:	հոկտեմբեր ամսում	Գ.Սեխպոսյան	
2.	Մեթոդական օգնություն դասղեկներին դաստիարակչական աշխատանքների պլանավորման հարցում:	օգոստոս սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան Հ. Գրիգորյան	
3.	Իրականացնել վերահսկողություն սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման համար:	ամեն օր	բուժքույր	
4.	Խրախուսել արտադպրոցական խմբակների հաճախող երեխաներին, աջակցել՝ խմբակներում ընդգրկված սովորողների թիվը մեծացնելու գործին՝ հաշվի առնելով սովորողների նախասիրությունները:	մշտական	դասղեկներ	
5.	Դասղեկի ժամերին մասնակից դարձնել դասավանդող ուսուցիչներին, ծնողներին և քաղաքում ճանաչում ունեցող տարբեր ոլորտների նշանավոր մարդկանց:	ուստարի	Հ. Գրիգորյան	
.6	2 ամիսը մեկ հրավիրել հեռավար ծնողական ժողովներ, քննարկել ուսումնադաստիարակչական, կազմակերպչական, մանկավարժամեթոդական հարցեր, ապահովել ծնողների դերը դպրոցի կառավարման գործում:	ուստարի	Հ. Գրիգորյան	
7	Դասղեկների խորհրդակցությունները դարձնել գործնական, նպատակային և ուսուցողական:	ուստարի	Հ. Գրիգորյան	
8	Կատարել դասասենյակի սանիտարական վիճակի և գույքի պահպանման ամենօրյա գնահատում: Դասղեկների խորհրդակցություններում ամփոփել արդյունքները: Սահմանել մրցանակներ:	մշտական	բուժքույր դասղեկ	
9	Ստեղծել դաստիարակչական աշխատանքների մեթոդական անկյուն:	հոկտեմբեր	Հ. Գրիգորյան	
10	Դասղեկների ժամերին՝ ամիսը մեկ անգամ, զրույց COVID-19 համավարակի կանխարգելման եւ առողջ ապրելակերպի շուրջ:	տարվա ընթացքում	Խ.Մաթևոսյան	
11	էքսկուրսիաներ՝ հայրենագիտական և հայրենասիրական դաստիարակության ու հայրենի երկրի ճանաչողությունը զարգացնելու նպատակով: ա) Սարդարապատ, Ծիծեռնակաբերդ բ) Հայաստանի և Գյումրիի պատմական թանգարաններ գ) Մատենադարան:	նոյեմբեր ապրիլ մայիս	ուսուցիչներ դասղեկներ	
12	Ավագ դպրոցում. ա) Ռազմական և ուսումնական խաղեր բ) Շարային պատրաստականության մրցույթներ գ) Լավագույն ընթերցողի, նկարչի, ասմունքողի մրցույթներ դ)Հանդիպումներ արվեստի տարբեր բնագավառնե-րի աշխատողների հետ ե) Գեղարվեստական ինքնագործունեության օլիմպիադա՝ նվիրված հայ մեծ երգահան Կոմիտասի ծննդյան օրվան: զ) Խաղաղասիրական թեմայով բանավեճ. «Ո՛չ պատերազմին» թեմայով՝ կապված հայ-թուրքական հարաբերություններին:	հոկտեմբեր ապրիլ ուստարի տարվա ընթացքում II կիսամյակ	զինղեկ ֆիզկ. ուսուցիչ գրակ. ուսուցիչ Լ.Գրիգորյան Հ. Գրիգորյան	

13	Ինտելեկտուալ «Ի՞նչ,որտե՞ղ, ե՞րբ…» խաղերի միջդասարանային մրցույթներ:	I կիսամյակ	Տնօրինություն	
14	Զրույց «Թմրամոլությունը և նրա վնասները» թեմայով (X-XII դասարաններում):	նոյեմբեր	հրավիրել մասնագետ-փորձագետներ	
15	Շարունակել «Ուստարվա լավագույն սովորող» և «Լավագույն դասարան» միջդասարանային մրցույթը:	ուստարի	Աշ. խորհուրդ	
16	Դասղեկների դաստիարակչական աշխատանքների առաջավոր փորձի տարածում:	փետրվար	Հ. Գրիգորյան	
17	Շարունակել համայնք-դպրոց կապի պահպանումը, որպես համայնքային ակտիվ դպրոց:	ուստարի	Հ. Գրիգորյան	
18	Միջդասարանային մրցույթներ. ա) Շախմատ բ) Վոլեյբոլ գ) Գնդի նետում դ) Սպորտլանդիա ե) Ինտելեկտուալ խաղային մրցույթներ X-XII դաս.:	փետրվար մարտ հոկտեմբեր	ֆիզկուլտուրայի ուսուցիչ	
19	Առողջ ապրելակերպի և առողջության պահպանման օրերի կազմակերպում բնության գրկում:	հոկտեմբեր մայիս	դասղեկ փոխտնօրեն	
20	Սովորողների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար ստեղծել «Մասնագիտական զարգացման դպրոց», կազմակերպել հանդիպումներ ԲՈՒՀ-երի դասախոսական կազմի, արվեստի գործիչների հետ:	տարվա ընթացքում	Հ. Գրիգորյան	
21	Ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ. ա) Կազմակերպել հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի վետերանների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների, դպրոցի շրջանավարտ – պատերազմի զոհվածների հարազատների հետ:	տարվա ընթացքում	Հ.Գրիգորյան Զինղեկ	
22	բ) Այցելություններ զոհվածների հուշարձաններին:	տարվա ընթացքում	Հ.Գրիգորյան	
23	գ) Աշխատանք զորամասի հետ:	տարվա ընթացքում	Ա.Ներսիսյան	
24	Հիշատակի և մեծարման ցերեկույթներ նվիրված Արցախյան պատերազմում զոհված հերոսամարտիկ-ների հիշատակին:	I կիսամյակ	Հ.Գրիգորյան դասղեկներ	
25	Ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով. ա) Մարզադահլիճը հնարավորության սահմաններում հարստացնել մարզական գույքով:	տարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան Ֆիզ. ուսուցիչներ	
26	բ) Ստեղծել մարմնամարզական խմբակներ տարբեր մարզաձևերից:	սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան Հ.Գրիգորյան ուսուցիչներ	
27	գ) Դպրոցական բուժքույրի օգնությամբ պարզել սովորողների առողջական վիճակը, կահավորել բուժկաբինետը, ձեռք բերել անհրաժեշտ դեղամիջոց-ներ: COVID-19 համավարակի կանխարգելման շրջանակներում սեմինար պարապմունք սովորողների և մանկավարժների հետ:	սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան Գ.Հարությունյան բուժքույր	
28	«Արմաթ ինժեներական լոբորատորիա»-խմբակի մասնակիցների թվի ավելացում:	տարվա ընթացքում	Ս.Բեգջանյան	

	ԲԱԺԻՆ 6 **ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ**			
1.	Ընտրել դպրոցի «Ծնողական խորհուրդ»:	սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան	
2.	Ապահովել ծնողների մասնակցությունը ներդպրոցական աշխատանքներին և ամրապնդել կապը համայնքի ազգաբնակչության հետ:	մշտական	խորհուրդ	
3.	Ապահովել ուսուցիչ-համայնք-սովորող փոխհարաբերությունը, յուրաքանչյուր շաբաթ օր սահմանել «Բաց դռների» օր:	մշտական	մանկավարժ. խորհուրդ	
4.	Ծնողների շրջանում կազմակերպել զեկուցումներ մանկավարժական, հոգեբանական, դաստիարակչական թեմաներով:	նոյեմբեր	Հ. Գրիգորյան	
5.	Դպրոցի ինտերնետային կապը դարձնել համագործակցության միջոց և կենտրոն:	ուստարի	տնօրինություն	
6.	Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներին:	ուստարի	տնօրինություն	
7.	Ծնողներին մասնակից դարձնել դպրոցի ներքին գնահատման գործընթացին, լսել նրանց քննադատական դիտողություններն ու առաջարկությունները:	ուստարի	տնօրեն	
8.	Ծնողների կարծիքներն ու նրանց առաջարկությունները հաշվի առնելով որոշել տարվա լավագույն ուսուցչին:	ուստարի	տնօրեն	
9.	Ապահովել ծնողական խորհրդի նախագահի կամ նրանց ներկայացուցչի մասնակցությունը մանկավարժական խորհրդի նիստերին:	տարվա ընթացքում	տնօրեն	
10.	Խթանել «Ծնողական համալսարանի» գործունեությունը, այն դարձնել ծնողների մշտական այցելությունների կենտրոն:	մշտական	տնօրեն	
11.	Հաստատության գործունեությամբ շահագրգռված անձանցից ստեղծել հոգաբարձուների խորհուրդ:	սեպտեմբեր	տնօրեն	
12.	Խորհրդի անդամներին ծանոթացնել հոգաբարձուների խորհրդի կանոնադրությանը:	սեպտեմբեր	տնօրեն	

VI.	ԲԱԺԻՆ 7 ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏ			
1.	Հաստատել գրադարանի ուստարվա աշխատանքային պլանը:	սեպտեմբեր	գրադարանավար	
2.	Ապահովել սովորողների կապը գրադարանի հետ:	ուստարի	գրադարանավար	
3.	Վարձակալության հիմունքներով սովորողներին ապահովել դասագրքերով:	սեպտեմբեր	գրադարանավար	
4.	Գրադարանային ֆոնդը հարստացնել ծրագրային գեղարվեստական գրականությամբ՝ օգտագործելով համայքի ուժերը:	ուստարի	տնօրեն առ.ենթ.մ.	
5.	Կազմակերպել գեղարվեստական գրքերի ընթեր-ցումներ և քննարկումներ:	ամիսը 1 անգամ	հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ	
6.	Գրադարանում ստեղծել ընթերցարան և այն ծառայեցնել նպատակին:	հոկտեմբեր	գրադարանավար	
7.	Ներդնել էլեկտրոնային գրադարանի գործունեությունը, ձեռք բերել ուսումնական և ուսումնամեթոդական հոլովակներ, ժապավեններ և կիրառել դաս-դասապրոցեսի և արտադասարանական միջոցառումների ընթացքում:	ուստարի	գրադարանավար տնօրինություն	
8.	Ավելի բովանդակալից և ուսուցողական դարձնել գրադարանի լույսընծայած թերթերը, կազմակերպած ցերեկույթներն ու գրական թեմաներով բանավեճերը:	ուստարի	գրադարանավար առ.ենթ.մ.	

	ԲԱԺԻՆ 8 **ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ**			
1.	Կազմել տարիֆիկացիա թղթային և էլեկտրոնային տարբերակով:	սեպտեմբեր	Գ.Սեխպոսյան	
2.	Կազմել ծախսերի նախահաշիվ, քննարկել դպրոցի խորհրդում և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժին:	ուստարվա ընթացքում	հաշվապահ դպրոցական խորհուրդ	
3.	Արտաբյուջետային ծախսերի նախահաշիվը համաձայնեցնել դպրոցի կառավարման խորհրդի և հոգաբարձուների խորհրդի հետ:	ուստարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան	
4.	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխնիկական միջոցների, դիդակտիկ պարագաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	Հ. Գրիգորյան	
5.	Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի ու սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր	Հ. Գրիգորյան	
6.	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	Հ. Գրիգորյան	
7.	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքի բակը, մարզահրապարակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	ուստարվա ընթացքում	տնտ. գծով փոխտնօրեն Գ. Հարությունյան	
8.	Աշխատանք տանել կաբինետների և լաբորատորիաների կահավորման, հարստացման, եղած գույքն ու սարքավորումներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:	մշտապես	կաբինետների և լաբորատորիաների վարիչներ	
9.	Հետևել դպրոցի ջեռուցման ներքին ցանցի անխափան աշխատանքին:	ուստարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան տնտ. գծով փոխտնօրեն	
10.	Պահպանել «Գնումների մասին» օրենքի պահանջնե-րը:	ուստարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան հաշվապահ	

	ԲԱԺԻՆ 9 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐՈՒՄ ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ	Ժամկետ	Պատասխանատու	Նշումներ կատարման մասին
1.	2021-2022 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում:	31 օգոստոս սեպտեմբեր 2022թ.	Գ.Սեխպոսյան	
2.	Ուսումնական հաստատության փոխտնօրենների հաշվետվություն 2021-2022 ուստարվա կատարած աշխատանքների մասին:	31 օգոստոս սեպտեմբեր 2022թ.	Մ.Մանուկյան Հ.Գրիգորյան	
3.	Առարկայական մեթոդական միավորումների նախագահների կատարած տարեկան աշխատանքնե-րի հաշվետվություն:	31 օգոստոս սեպտեմբեր 2022թ.	մ/մ նախագահներ	
4.	2022-2023 ուսումնական տարվա I կիսամյակի գնահատականների արդյունքների ամփոփում:	դեկտեմբեր 2022թ.	Դասղեկ-դասվարներ	
5.	2022-2023 ուստարվա I կիսամյակի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների քննարկում:	28 դեկտեմբեր 2022թ.	Հ.Գրիգորյան	
6.	2022-2023 ուսումնական տարվա սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ ԿԳ նախարարի հրահանգի մասայականացում:	մայիս 2023թ	Մ.Մանուկյան	
7.	2022-2023 ուսումնական տարվա II կիսամյակի և տարեկան գնահատականների արդյունքների ամփոփում:	մայիս 2023թ	Դասղեկ-դասվարներ	
8.	Սովորողների գիտելիքների ստուգման ավարտական և պետական ավարտական քննություններին մասնակցելու թույլտվության մասին	մայիս 2023թ	Մ.Մանուկյան	
9.	12-րդ դասարանին միջնակարգ կրթության ատեստատ տալու մասին:	հունիս 2023թ	Գ.Սեխպոսյան Մ.Մանուկյան	
10.	«Հանրակրթական ուսումնական հաստատության ներքին գնահատման ցուցանիշներ և դրանց հաշվարկման մեթոդաբանություն» ձեռնարկի և «Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման հաշվետվության ձևի և մեթոդական ուղեցույցի» քննարկում:	հունիս 23	Գ.Սեխպոսյան	

1.	**ԲԱԺԻՆ 10** **ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ** Ուսումնական պարապմունքները կազմակերպել մեկ հերթով. Ի հերթ ա) X- XII դասարաններ	ուստարվա ընթացքում	Գ.Սեխպոսյան	
2.	Կոմպլեկտավորել հետևյալ դասարանները ա) ավագ դպրոց - X – XII դասարաններ - 10	սեպտեմբեր	տնօրեն	
3.	Նշանակել դասղեկներ:	օգոստոս	Գ.Սեխպոսյան	
4.	Նշանակել և մանկավարժական խորհրդին ներկայացնել առարկայական մեթոդ - միավորումների նախագահներին:	20-30 օգոստոս	Գ.Սեխպոսյան մանկ. խորհուրդ	
5.	Նշանակել ավագ հերթապահներ և պահանջել. • Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական 2 մասնաշենքերում: • Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը: • Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին:	մշտապես	Մ. Մանուկյան Հ. Գրիգորյան	
6.	Սահմանել կարգ 1. Յուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայանա դասերը սկսելուց 15 րոպե առաջ՝ ըստ «Աշխատանքային ժամանակացույցի՝ հիմք ընդունելով «Ներքին կարգապահական կանոնները»: Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել փոխտնօրենի՝ Մ.Մանուկյանի վրա:	մշտապես	տնօրեն փոխտնօրեն	
7.	Սահմանել վարչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմը:	սեպտեմբեր	տնօրեն	
8.	Հետևել, որ դասղեկները, համակարգչային օպերատորն, լաբորատոր գույքի պատասխանատուները կրեն պատասխանատվություն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար:	ուստարի	տնօրեն	
9.	Դպրոցական շենքի պահպանման, տնտեսական կարիքները հոգալու, հակահրդեհային միջոցառումները իրականացնելու պարտականությունները դնել տնտեսվար Գ.Հարությունյանի վրա:	մշտապես	տնտեսվար	
10.	Դպրոցական շենքը էլեկտրական հոսանքով ապահովելու, էլ. գծերն ու սարքավորումները, արևային վահանակների, կաթսայատան աշխատանքը անվտանգ պահելու պատասխանատվությունը դնել դպրոցի տնտեսվար Գ.Հարությունյանի վրա:	մշտապես	տնտեսվար	
11.	Կազմակերպել սովորողների ինքնակառավարումը ըստ դպրոցի աշակերտական կանոնադրության:	սեպտեմբեր	Հ.Գրիգորյան	
12.	Դասագրքերի բաշխման աշխատանքների կազմակերպում:	օգոստոս	գրադարանավար	
13.	Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան:	25-30 օգոստոս	տնտեսվար	